ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 8
ՖՀՄՍ 2-ի գործողության ոլորտը

Հղումներ

- ՀՀՄՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*
- ՖՀՄՍ 2 *Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում*

Նախապատմություն

1 ՖՀՄՍ 2-ը կիրառվում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքների նկատմամբ, որոնցում կազմակերպությունը ստանում կամ ձեռք է բերում ապրանքներ կամ ծառայություններ: «Ապրանքները» ներառում են պաշարներ, սպառողական նյութեր, հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և այլ ոչ ֆինանսական ակտիվներ (ՖՀՄՍ 2, պարագրաֆ 5): Հետևաբար, բացառությամբ հատուկ գործարքների, որոնք դուրս են ՖՀՄՍ 2-ի գործողության ոլորտից, ՖՀՄՍ 2-ը կիրառելի է բոլոր այն գործարքների դեպքում, որտեղ կազմակերպությունը ոչ ֆինանսական ակտիվներ կամ ծառայություններ է ստանում ընկերության բաժնային գործիքների թողարկման դիմաց: ՖՀՄՍ 2-ը կիրառելի է նաև այն գործարքների նկատմամբ, որոնցում ընկերությունը ստանձնում է այնպիսի պարտավորություններ ստացված ապրանքների կամ ծառայությունների դիմաց, որոնք հիմնվում են ընկերության բաժնետոմսերի կամ այլ բաժնային գործիքների գնի (կամ արժեքի) վրա:

2 Որոշ դեպքերում, սակայն, կարող է դժվար լինել ցույց տալ, որ ապրանքները կամ ծառայությունները ստացվել են (կամ ստացվելու են): Օրինակ՝ կազմակերպությունը կարող է բարեգործական կազմակերպությանը նվիրաբերել բաժնետոմսեր զրոյական հատուցմամբ: Սովորաբար հնարավոր չէ որոշել (իդենտիֆիկացնել) այն առանձին ապրանքները կամ ծառայությունները, որոնք ստացվել են այդպիսի գործարքի դիմաց: Նման իրավիճակ կարող է առաջանալ նաև այլ կողմերի հետ գործարքների դեպքում:

3 ՖՀՄՍ 2-ը պահանջում է, որ աշխատակիցներին կատարված բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների գործարքները չափվեն տրամադրման ամսաթվով այդ վճարումների իրական արժեքի հիմքով (ՖՀՄՍ 2, պարագրաֆ 11):[1] Հետևաբար, կազմակերպությունից չի պահանջվում ուղղակիորեն չափել աշխատակիցներից ստացած ծառայությունների իրական արժեքը:

4 Այն գործարքների դեպքում, որոնցում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումները կատարվում են ընկերության աշխատակից չհանդիսացող այլ անձանց, ՖՀՄՍ 2-ը հատկանշում է այն հերքելի կանխավարկածը, որ ապրանքների կամ ծառայությունների իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Այսպիսի իրավիճակներում ՖՀՄՍ 2-ը պահանջում է, որ գործարքը չափվի ապրանքների կամ ծառայությունների այն ամսաթվին առկա իրական արժեքով, երբ կազմակերպությունը ձեռք է բերում ապրանքը, կամ պայմանագրային կողմը մատուցում է ծառայությունը (ՖՀՄՍ 2, պարագրաֆ 13): Հետևաբար, հիմքում դրված կանխավարկածն այն է, որ ընկերությունը կարող է որոշել (իդենտիֆիկացնել) ապրանքները և ծառայությունները, որոնք ստացվել են ընկերության աշխատակից չհանդիսացող այլ անձանց կողմից: Սա առաջացնում է հարց, թե արդյոք այս ՖՀՄՍ-ն կիրառվում է որոշելի (իդենտիֆիկացվող) ապրանքների և ծառայությունների բացակայության դեպքում: Սա իր հերթին առաջացնում է հաջորդ հարցը՝ եթե ընկերությունը իրականացրել է բաժնետոմսի վրա հիմնված վճարում, և ստացված որոշելի (իդենտիֆիկացվող) հատուցումը (եթե գոյություն ունի այդպիսին) ավելի ցածր է, քան բաժնետոմսի վրա հիմնված վճարման իրական արժեքը, արդյոք այս

[1] Համաձայն ՖՀՄՍ 2-ի՝ բոլոր հղումները աշխատողներին ներառում են նաև նմանատիպ ծառայություններ մատուցող այլ անձանց:

իրավիճակը նշանակում է, որ ստացվել են ապրանքներ կամ ծառայություններ, անգամ եթե դրանք հստակ որոշելի (իդենտիֆիկացվող) չեն, և որ, հետևաբար, պետք է կիրառվի ՖՀՄՍ 2-ը:

5 Պետք է նշել, որ «բաժնետոմսի վրա հիմնված վճարումների իրական արժեք» արտահայտությունը վերաբերում է խնդրո առարկա առանձին բաժնետոմսի վրա հիմնված վճարման իրական արժեքին: Օրինակ՝ հնարավոր է, որ կազմակերպությունից, համաձայն երկրի օրենսդրության, պահանջվի իր բաժնետոմսերի մի մասը թողարկել որոշակի երկրի քաղաքացիների համար, և այդ բաժնետոմսերը կարող են փոխանցվել միայն նույն երկրի այլ քաղաքացիների: Այսպիսի փոխանցման սահմանափակումը կարող է ազդեցություն ունենալ համապատասխան բաժնետոմսի իրական արժեքի վրա, և, հետևաբար, այդ բաժնետոմսերը կարող են ունենալ ավելի ցածր իրական արժեք, քան այլ նույնատիպ (առանց նկարագրված սահմանափակման) բաժնետոմսերը: Այս պարագայում, եթե 4-րդ պարագրաֆի հարցը ծագելու լիներ սահմանափակման առարկա հանդիսացող բաժնետոմսերի վերաբերյալ, «բաժնետոմսի վրա հիմնված վճարումների իրական արժեք» արտահայտությունը կվերաբերեր սահմանափակման առարկա հանդիսացող բաժնետոմսերի իրական արժեքին, այլ ոչ թե առանց սահմանափակման այլ բաժնետոմսերի իրական արժեքին:

Գործողության ոլորտ

6 ՖՀՄՍ 2-ը կիրառվում է այն գործարքների նկատմամբ, որոնցում կազմակերպությունը կամ կազմակերպության բաժնետերերը տրամադրել են բաժնային գործիքներ[2] կամ ստանձնել են պարտավորություն՝ փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ակտիվներ այն գումարով, որը հիմնված է ընկերության բաժնետոմսերի կամ այլ բաժնային գործիքների գնի (կամ արժեքի) վրա: Սույն մեկնաբանությունը կիրառվում է այդպիսի գործարքների նկատմամբ այն դեպքերում, երբ ընկերության կողմից ստացված կամ ստացվելիք որոշելի (իդենտիֆիկացվող) հատուցումը, ներառյալ դրամական միջոցները և ոչ դրամային հատուցման իրական արժեքը (եթե կա այդպիսին) ավելի ցածր է, քան տրամադրված բաժնային գործիքների կամ ստանձնած պարտավորության իրական արժեքը: Սակայն սույն մեկնաբանությունը չի կիրառվում այն գործարքների նկատմամբ, որոնք՝ ՖՀՄՍ 2-ի 3-6-րդ պարագրաֆների համաձայն, այդ ՖՀՄՍ-ի գործողության ոլորտից դուրս են:

Հարցադրում

7 Սույն մեկնաբանության մեջ դիտարկված հարցադրումն այն է, թե արդյոք ՖՀՄՍ 2-ը կիրառելի է այն գործարքների նկատմամբ, որոնցում կազմակերպությունը չի կարող որոշել (իդենտիֆիկացնել) որոշ կամ բոլոր ստացված ապրանքները կամ ծառայությունները:

Փոխհամաձայնություն

8 ՖՀՄՍ 2-ը կիրառելի է այն առանձնահատուկ գործարքների նկատմամբ, որոնցում կազմակերպությունը ստանում է ապրանքներ կամ ծառայություններ՝ որպես հատուցում ընկերության բաժնային գործիքների դիմաց: Սա ներառում է այն գործարքները, որոնցում ընկերությունը հստակ չի կարող որոշել (իդենտիֆիկացնել) ստացված որոշ կամ բոլոր ապրանքները կամ ծառայությունները:

9 Հստակ որոշելի (իդենտիֆիկացվող) ապրանքների կամ ծառայությունների բացակայության դեպքում այլ հանգամանքներ կարող են վկայել, որ ապրանքները կամ ծառայությունները ստացվել են կամ ստացվելու են, ինչի դեպքում կիրառվում է ՖՀՄՍ 2-ը: Մասնավորապես, եթե որոշելի (իդենտիֆիկացվող) հատուցումը (դրա գոյության դեպքում) ավելի փոքր է, քան տրամադրված բաժնային գործիքների կամ ստանձնած պարտավորության իրական արժեքը,

[2] Դրանք ներառում են ընկերության, ընկերության բաժնետեր ընկերության, այլ ընկերությունների սեփական կապիտալի գործիքներ:

ապա, որպես կանոն, այս հանգամանքը վկայում է այն մասին, որ ստացվել կամ ստացվելու է այլ հատուցում (այսինքն՝ ոչ որոշելի ապրանքներ կամ ծառայություններ):

10 Կազմակերպությունը պետք է չափի ստացված որոշելի (իդենտիֆիկացվող) ապրանքները կամ ծառայությունները՝ համաձայն ՖՀՄՍ 2-ի:

11 Կազմակերպությունը պետք է ստացված կամ ստացվելիք ոչ որոշելի (ոչ իդենտիֆիկացվող) ապրանքները կամ ծառայությունները չափի որպես բաժնետոմսի վրա հիմնված վճարումների իրական արժեքի և ստացված կամ ստացվելիք որոշելի (իդենտիֆիկացվող) ապրանքների կամ ծառայությունների իրական արժեքի տարբերություն:

12 Կազմակերպությունը պետք է ստացված կամ ստացվելիք ոչ որոշելի (ոչ իդենտիֆիկացվող) ապրանքները կամ ծառայությունները չափի տրամադրման ամսաթվով: Այնուամենայնիվ, դրամական միջոցներով մարվող գործարքների դեպքում պարտավորությունը պետք է վերաչափվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, մինչև պարտավորության մարումը:

Ուժի մեջ մտնելը

13 Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի 2006 թվականի մայիսի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ավելի վաղ կիրառումը խրախուսվում է: Եթե կազմակերպությունը սույն մեկնաբանությունը կիրառման մեջ է դնում 2006 թվի մայիսի 1-ից առաջ, ապա նա պետք է բացահայտի այդ փաստը:

Անցում

14 Սույն մեկնաբանությունը կազմակերպությունը պետք է կիրառի հետընթաց՝ ՀՀՄՍ 8-ի պահանջներին համաձայն՝ հաշվի առնելով ՖՀՄՍ 2-ի անցումային դրույթները: